ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«07» ապրիլ 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ. Անանյան

ԳԲԽ-28/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի 29.03.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«ՖԼԵԾ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«ՖԼԵԾ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.03.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով «ՖԼԵԾ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել և «Չափաբաժին 4. Ավիավառելիք» մասով զբաղեցրել է 2-րդ տեղը, իսկ 1-ին տեղը զբաղեցրել է «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն: Գնումների բողոքարկման խորհրդի

22.03.2016թ. թիվ ՍՑ-02/16 որոշմամբ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն ընդգրկվել է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ):

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետը, որի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Հետևաբար «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն իրավունք չունի կնքել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հեղուկ վառելիքի գնման պայմանագիրը:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ ենթակետի հիման վրա մասնակիորեն դադարեցնել Պատվիրատուի կողմից Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու որոշումը՝ «Չափաբաժին 4. Ավիավառելիք» մասով և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին:

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի գործադիր տնօրենը մասնակցելով 01.04.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-28/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքը:

2. «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն 04.04.2016թ. թիվ 004/16 գրությամբ ամբողջությամբ առարկել է 29.03.2016թ. «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի պահանջների դեմ:

Ըստ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի՝ բողոք բերողը չի ներկայացրել որևէ իրավական հիմք կամ փաստական հանգամանք, որի առկայությունը կարող է հիմք լինել գնումները կարգավորող օրենսդրությամբ նախատեսված որևէ հիմքով Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու մասին: Նշված

որոշումն ընդունվել է օրենսդրական պահանջների պահպանմամբ, չկա որևէ հիմք այն անվավեր ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն խնդրել է «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի բողոքն ամբողջությամբ մերժել:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.04.2016թ. թիվ ԴՎԱ/842 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը, մասնակցելով 01.04.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-28/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, որևէ առարկություն չի հայտնել «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ:

4. ԳԲԽ-28/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-28/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն և «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ***23.02.2016թ.*** հայտեր են ներկայացրել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.02.2016թ. ժամը 11:00-ի թիվ 3 արձանագրությամբ որոշել է 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին, իսկ 4-րդ չափաբաժնի մասով՝ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.03.2016թ. ժամը 11:00-ի թիվ 4 արձանագրության 1.2-րդ ենթակետով «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին ճանաչել է 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից և վերջինիս ներկայացրել է պայմանագիր կնքելու առաջարկ:

5. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հայտարարությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է ***22.03.2016թ.*** և պայմանագրի կնքման անգործության ժամկետը սահմանվել է մինչև 01.04.2016թ. ներառյալ:

6. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ***22.03.2016թ. թիվ ՍՑ-02/16*** որոշմամբ բավարարել է ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2016թ. թիվ 1/73-1/8493-16 գրությամբ ներկայացված «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը և ***«ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին ներառել է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ Խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված տասնմեկ ամիս ժամկետով ժամկետով:***

5. ԳԲԽ-28/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի 29.03.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 22.03.2016թ. թիվ ՍՑ-02/16 որոշումը, «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի գրությունը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 2-րդ հոդվածի 25-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացը** գնում կատարելու վերաբերյալ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնումների նախապատրաստում.

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***24.02.2016թ.*** ժամը 11:00-ի թիվ 3 արձանագրությամբ որոշել է 4-րդ չափաբաժնի մասով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***17.03.2016թ.*** ժամը 11:00-ի թիվ 4 արձանագրության 1.2-րդ ենթակետով «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին ճանաչել է 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից և վերջինիս ***22.03.2016թ.*** ներկայացրել պայմանագիր կնքելու առաջարկ:

Միևնույն ժամանակ Գնումների բողոքարկման խորհուրդը ***22.03.2016թ. թիվ ՍՑ-02/16*** որոշմամբ բավարարել է ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2016թ. թիվ 1/73-1/8493-16 գրությամբ ներկայացված «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02621665) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը՝ ***Ընկերությանը ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված տասնմեկ ամիս ժամկետով:***

Համաձայն Կարգի 4-րդ կետի՝ ***գնման գործընթացը ենթադրում է մի շարք գործողությունների ամբողջություն***, այն է՝ գնումների պլանավորում, գնումների նախապատրաստում, ***պայմանագրի կնքում և պայմանագրի կատարում:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման գործընթացն իր մեջ ներառում է նաև պայմանագրի կնքման և պայմանագրի կատարման փուլերը, իսկ «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն գնման գործընթացի պայմանագրի կնքման փուլում ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 22.03.2016թ. թիվ ՍՑ-02/16 որոշմամբ ներառվել է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, հետևաբար, հիմք ընդունելով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Կարգի 4-րդ կետի դրույթները, «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ն իրավունք չունի շարունակել մասնակցելու գնման գործընթացին:

Նման պայմաններում գտնում եք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջը հիմնավոր է, ուստի գտնում ենք, որ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի բողոքը նշված մասով ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին՝ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջին, ապա անհրաժեշտ է նշել, որ

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, Ընկերությանն Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշում կայացնելու լիազորություն չունի, հետևաբար «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի բողոքը նշված մասով ենթակա է մերժման:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոհիշյալը, գտնում ենք, որ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից 29.03.2016թ. ներկայացված բողոքը հիմնավոր է, ուստի առաջարկում ենք «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի բողոքը բավարարել մասնակի.

1. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «ԳԵՎԳՐԻԳ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջը բավարարել.

2. «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին՝ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին պահանջը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝		Հ. Այունց
Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝		Հ. Ենգոյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ		Մ. Կատվալյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-28/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝		Ա. Ծատուրյան